# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

## ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

06.05.2020թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրզոյան,

ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Համայնքային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝

ա/ նախագծերի փաթեթը (հիմնական զեկուցող՝ Վարդևան Գրիգորյան),

բ) նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքների փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը:

Խնդրում ենք սահմանված կարգով նախագծերի փաթեթը դնել շրջանառության մեջ:

Կանխավ շնորհակալ ենք:

Հարգանքով՝ Վարդևան Գրիգորյան

Գևորգ Պետրոսյան

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 1. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ Օրենք) 49-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով.

«4.Պարտադիր ժամկետային զինծառայողների «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ժամանակաշրջանը սույն օրենքի իմաստով հաշվարկվում է որպես հանրային ծառայության ստաժ՝ պետական ծառայության, քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար:»:

**Հոդված 2.** Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. 1. «Քաղաքացիական ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-205-Ն օրենքի (այսուհետ Օրենք) 31-րդ հոդվածը լրացնել նոր 7-րդ մասով.

«7.Պարտադիր ժամկետային զինծառայողների «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ժամանակաշրջանը սույն օրենքի իմաստով

հաշվարկվում է որպես հանրային ծառայության ստաժ՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար: »:

**Հոդված 2**. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 1. «Համայնքային ծառայության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-43-Ն օրենքի (այսուհետ Օրենք) 17-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով.

«4.Պարտադիր ժամկետային զինծառայողների «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ժամանակաշրջանը սույն օրենքի իմաստով հաշվարկվում է որպես հանրային ծառայության ստաժ՝ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար:»:

**Հոդված 2.** Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ**

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**Ներկա իրավիճակը**

«Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանվում է Հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները: Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը: Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը:

Զինվորական ծառայողները, ովքեր պայմանագրային հիմունքներով են ծառայում, համարվում են հանրային ծառայողներ, իսկ նրանց հավասար զինվորական պաշտոնում գտնվող պարտադիր ժամկետային զինծառայողները չեն համարվում հանրային ծառայողներ, չնայած իրականացնում են նույնաբովանդակ ծառայություն, լուծում են նույն աշխատանքային խնդիրները, դրսևորում են նույն մասնագիտական ունակությունները, ձեռք են բերում նույն մասնագիտական կոմպետենցիան: Բացի դրանից նույն ծառայությունը իրականացնելով հանդերձ ժամկետային պարտադիր զինծառայողները չեն օգտվում

հանրային ծառայողների համար օրենքով սահմանված արտոնություններից, սոցիալական երաշխիքներից և այլն:

Պետական կենսաթոշակների մասին օրենքով աշխատանքային ստաժի մեջ հաշվառվող ժամանակահատվածում ընդգրկվում է զինծառայության ժամանակահատվածը: Սակայն այդ ստաժի ժամանակահատվածը պարտադիր ժամկետային զինծառայողին ծառայության ավարտից հետո չի տալիս հնարավորություն մասնակցելու քաղաքացիական ծառայության ոլորտում մասնագիտական պաշտոնների 1-ից 5-րդ ենթախմբերի համար հայտարարված մրցույթներին որտեղ պահանջվում է հանրային ծառայության ոլորտի 1-ից 2 տարվա ստաժ:և հավակնելու այդ պաշտոններին կամ համայնքային ծառայության առաջատար պաշտոնների:

**Առաջարկվող լուծումները**

Առաջարկում ենք «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» և «Համայնքային ծառայության մասին» օրենքներում սահմանել դրույթ այն մասին, որ պարտադիր զինվորական ծառայության ժամկետը համարվի հանրային ծառայության ստաժ:

**Ակնկալվող արդյունք**

Նախագծերի փաթեթի ընդունման արդյունքում կվերանա օրենքի բացը, պարտադիր զինվորական ծառայության ժամկետը, ճիշտ այնպես, ինչպես պայմանագրային զինվորական ծառայության ժամկետը, կհամարվի հանրային ծառայության ստաժ: Այսպիսով էականորեն կբարձրանա պարտադիր զինվորական ծառայության գրավչությունը, պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող բարձրագույն կրթությամբ անձինք կլինեն շատ ավելի մոտիվացված և պարտադիր զինվորական ծառայությունը այդ իմաստով կդառնա շահեկան:

**Տեղեկանք գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2018 թվականի մարտի 23-ին

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 49. Հանրային ծառայության ստաժը

1. Հանրային ծառայության ստաժը ներառում է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը պետական կամ համայնքային ծառայության պաշտոններում աշխատելու ողջ ժամանակահատվածը:

2. Հանրային ծառայության ստաժը ներառում է նաև պետական և համայնքային պաշտոններում աշխատանքը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով փորձագետ աշխատելու ժամանակահատվածները:

3. Հանրային ծառայության ստաժը չի ներառում օրենքով սահմանված կարգի խախտմամբ հանրային ծառայության և (կամ) պետական և համայնքային պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն օրենքի խախտմամբ պետական կամ համայնքային ծառայության պաշտոններում աշխատելու ողջ ժամանակահատվածը:

4. Պարտադիր ժամկետային զինծառայողների «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ժամանակաշրջանը սույն օրենքի իմաստով հաշվարկվում է որպես հանրային ծառայության ստաժ՝ պետական ծառայության, քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2018 թվականի մարտի 23-ին

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 31. Քաղաքացիական ծառայության ստաժը

1. Քաղաքացիական ծառայության ստաժը ներառում է քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու, քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված լինելու, համապատասխան մարմիններում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն աշխատած ողջ ժամանակահատվածը:

2. Քաղաքացիական ծառայության ստաժը չի ներառում սույն օրենքով սահմանված կարգի խախտմամբ՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու, քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված լինելու, ինչպես նաև օրենքի խախտմամբ համապատասխան մարմիններում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն աշխատած ժամանակահատվածը:

3. Քաղաքացիական ծառայության ստաժը հաշվարկվում է քաղաքացիական ծառայողի ընդհանուր աշխատանքային ստաժում:

4. Սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված հիմքով՝ քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված անձի պետական պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածի աշխատանքային ստաժը հավասարեցվում է քաղաքացիական ծառայության ստաժին:

5. Համապատասխան մարմիններում փորձնակ գրանցված ժամանակաշրջանը սույն օրենքի իմաստով հաշվարկվում է որպես հանրային ծառայության ստաժ՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար: Փորձնակ գրանցված ժամանակահատվածում աշխատանքների մասնակցության համար փորձնակը չի վարձատրվում:

6. Փորձնակ գրանցելու և աշխատանքների մասնակցության առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

7.Պարտադիր ժամկետային զինծառայողների «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ժամանակաշրջանը սույն օրենքի իմաստով հաշվարկվում է որպես հանրային ծառայության ստաժ՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### Հոդված 17. Համայնքային ծառայության ստաժը

1. Համայնքային ծառայության ստաժը ներառում է համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու, աշխատակազմերում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, ինչպես նաև մինչև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելն աշխատած ողջ ժամանակաշրջանը:

Համայնքային ծառայության ստաժը չի ներառում սույն օրենքով սահմանված կարգի խախտմամբ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու, օրենքի խախտմամբ աշխատակազմերում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, ինչպես նաև մինչև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելն աշխատած ողջ ժամանակաշրջանը:

2. Համայնքային ծառայության ստաժը հաշվարկվում է համայնքային ծառայողի ընդհանուր աշխատանքայինստաժում: Համայնքային ծառայության ստաժը հաշվարկվում է նաև համայնքային ծառայողի մասնագիտականաշխատանքային ստաժում, եթե այն համապատասխանում է ստացած բարձրագույն կրթությանը:

3. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հանրային պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոնն զբաղեցնելու ժամանակաշրջանի աշխատանքային ստաժը հավասարեցվում է համայնքային ծառայության ստաժին:

4.Պարտադիր ժամկետային զինծառայողների «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ժամանակաշրջանը սույն օրենքի իմաստով հաշվարկվում է որպես հանրային ծառայության ստաժ՝ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար:

*(17-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 30.09.08 ՀՕ-172-Ն, խմբ., փոփ. 08.12.11 ՀՕ-347-Ն, 05.02.13 ՀՕ-4-Ն, խմբ. 21.01.20 ՀՕ-22-Ն)*